

Ս. ԱԹՈՒՆ ԲԱԶՄԱԾԸ՝ ԱՆՊԱՅՄԱՆՈՐԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԸ ԶԷ...

Posted on August 2, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



Մեր Գ. Տերտերեան, Պեյրուբ. 30 Յուլիս 2018

Ձեզի **անծանօթ** այդ **անծը**՝ եթէ նոյնիսկ վեղար մը ունի իր գլխուն, եւ ադամանդակուռ պսպղուն մեծ **Է** տառը կայ ճակտին, ան՝ **անսպայմանօրէն** Ս. Էջմիածինի Հայրապետութեան **արժանի անձ մը** չէ հաւանաբար: Հետեւաբար, հարկ է որ պրպտեք տեղեկութիւններ՝ անոր մասին, անոր ինքնութեան, կենցաղին, վարք ու բարքին եւ գործունեութեան ու մտային կարողութեան մասին, եւ մասնաւորաբար՝ **թէ ինչ ճամբով հասած է բազմելու** Ս. Աթոռին...: Քանի որ մեր պատմութեան մէջ, Պոլսոյ պատրիարքներէն մին՝ կոչուած է «**Ճրհաննէմ Մերտիվանը...**»: Յակոբ Պարոնեան գրած է «**Փիլոն հագած կապիկներու**» մասին, եւ՝ «**Գառնուկի մորթով գայլեր**» հասած են բարձր պաշտօններու, իսկ Թոնտրակեան յեղափոխութիւնը ծայր առած է որպէս ըմբստութիւն՝ մեր **արծաթասէր** կաթողիկոսներուն դէմ, որոնցմէ մին եղած է մեծ **աւատատեր**, սեփականացնելով մօտ 500 հայկական գիւղեր...: Իսկ այսօր եւս կը խօսուի եւ կը գրուի մօտ 12 **միլիոնատեր** կաթողիկոսներու, արքեպիսկոպոսներու եւ եպիսկոպոսներու (եւ պատրիարքներու) մասին... որոնք **հոգեւորական մնալով** եւ հոգեւորականի վարք ու բարքով՝ չէին կրնար միլիոնատեր դառնալ: Եւ արդէն՝ ինքնաշարժերու արքան՝ Հենրի Ֆորտ, իր կենսագրութեան մէջ խոստովանած է, թէ՛ իր **առաջին մէկ միլիոն** տուարը գողցած է...:



Մեր Գ. Տերտերեան, Պեյրուբ. 30 Յուլիս 2018

Ձեզի **անծանօթ** այդ **անծը**՝ եթէ նոյնիսկ վեղար մը ունի իր գլխուն, եւ ադամանդակուռ պսպղուն մեծ **Է** տառը կայ ճակտին, ան՝ **անսպայմանօրէն** Ս. Էջմիածինի Հայրապետութեան **արժանի անձ մը** չէ հաւանաբար: Հետեւաբար, հարկ է որ պրպտեք տեղեկութիւններ՝ անոր մասին, անոր ինքնութեան, կենցաղին, վարք ու բարքին եւ գործունեութեան ու մտային կարողութեան մասին, եւ մասնաւորաբար՝ **թէ ինչ ճամբով հասած է բազմելու** Ս. Աթոռին...: Քանի որ մեր պատմութեան մէջ, Պոլսոյ պատրիարքներէն մին՝ կոչուած է «**Ճրհաննէմ Մերտիվանը...**»: Յակոբ Պարոնեան գրած է «**Փիլոն հագած կապիկներու**» մասին, եւ՝ «**Գառնուկի մորթով գայլեր**» հասած են բարձր պաշտօններու, իսկ Թոնտրակեան յեղափոխութիւնը ծայր առած է որպէս ըմբստութիւն՝ մեր **արծաթասէր** կաթողիկոսներուն դէմ, որոնցմէ մին եղած է մեծ **աւատատեր**, սեփականացնելով մօտ 500 հայկական գիւղեր...: Իսկ այսօր եւս կը խօսուի եւ կը գրուի մօտ 12 **միլիոնատեր** կաթողիկոսներու, արքեպիսկոպոսներու եւ եպիսկոպոսներու (եւ պատրիարքներու) մասին... որոնք **հոգեւորական մնալով** եւ հոգեւորականի վարք ու բարքով՝ չէին կրնար միլիոնատեր դառնալ: Եւ արդէն՝ ինքնաշարժերու արքան՝ Հենրի Ֆորտ, իր կենսագրութեան մէջ խոստովանած է, թէ՛ իր **առաջին մէկ միլիոն** տուարը գողցած է...:



...

Հայաստանի մեջ ներկայիս մղուող ժողովրդային ըմբոստությունը Ս. Էջմիածնի **գահակալի անձին դեմ** հիմնովին տարբեր է, 20-րդ դարի կեսերուն, **ցուրտ պատերազմի** թե՛ օրերուն այն **միջազգային, իմփերիալիստական անարդար պատերազմէն**, որ կը մղուէր Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետութեան **Մայր Աթոռին դեմ...**: Երբ **միասնական** Հայոց. Եկեղեցիին գահանայապետը՝ **երջանկայիշատակ** Վազգէն Ա. Հայրապետը կը վայելէր Համահայրութեան (ի Սովետ Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի) **խորին ակնածանքը եւ վստահութիւնը**, բացի՝ հայկական **կուսակցութեան մը Բիւռոյէն...** որ լծուած էր ամերիկեան իմփերիալիզմի կառքին, որուն քաղաքական **նախայարձակ** ծրագիրն էր՝ **գրաւել** Անթիլիասի Կիլիկեան Աթոռը եւ **զայն հակադրել** Ս. Էջմիածնի Մայր Աթոռին, **երկփեղկելով** միասնական Հայոց. Եկեղեցին, եւ **գրաւեալ** Անթիլիասի աթոռին **կցելով**՝ Ս. Էջմիածնի աշխարհասփիւռ թեմերն ալ... ամբողջ Սփիւռքահայրութիւնը **հակադրելու** յոյսով՝ ոչ միայն Ս. Էջմիածնին, այլեւ՝ Սովետ հայաստանի միակ **Հայկական, իրական ու շօշափելի եւ վերածնած Հայրենիքին**, Սփիւռքահայրութիւնը օրօրելով «հոգեկան», անիրական եւ անշօշափելի ապառնի «հայրենիք»ի մը երագով, մինչեւ՝ Սովետ Հայաստանի ազատ ու ծաղկուն հայրենիքին «**ազատագրումը սովետական տաժան լուծէն**», որ մաս կը կազմէր **Սովետ Միութիւնը տարանջատելու** ամերիկեան իմփերիալիզմի ծրագրին...: Բայց, այս կուսակցութեան Բիւռոն՝ հաւանաբար, չէր հաւատար, որ ամերիկեան իմփերիալիզմը պիտի կարողանար **տարանջատել** Սովետ Միութիւնը, եւ՝ «ազատագրուած» Սովետ Հայաստանի իշխանութիւնը պիտի տար իր կուսակցութեան: Այլ կը գոհանար այն բանով, որինք պիտի կարողանար՝ յաջս Սովետ Հայաստանի իշխանութեան, **սակարկութեան իբր խաղաքարտ** օգտագործել՝ անջատեալ եւ Էջմիածնական թեմերու գրաւումով զօրացած Անթիլիասի Աթոռը, որպէս սփիւռքահայրութիւնը ներկայացնող կեդրոն, միակ իրական ու հզօր հայրենիքի իշխանութիւններէն **կորզել՝ ճանաչում եւ գէթ նուազագոյն դիրք մը** հայրենիքի իշխանութեան **վարչամեքենային մեջ...**: Որովհետեւ՝ այս կուսակցութիւնը իշխանատենչ, պատեհապաշտ, «պետական» կուսակցութիւն ըլլալու յաւակնութիւնը ունեցող **ինքնանպատակ** (Գարեգին Նժդեհի իսկ խոստովանութեամբ) կուսակցութիւն մըն է, որ մոլուցքը ունի **մենատիրութեան**, որ երբ անկարելի է, կը պահանջէ՝ **անուղաղն...** գէթ **մասնակիցը** դառնալ իրական ու շօշափելի հայրենիքի **պետական իշխանութեան, առժամաբար գէթ**, յուսալով միշտ, որ **հետագային կրնայ տիրանալ** պետական ամբողջ իշխանութեան...: Այս կուսակցութիւնը մինչեւ օրս կը պահէ իր այս մարմաջը, որուն անհերքելի փաստն է՝ յաջորդաբար հետեւողական իր **կոալիցիա** կազմելը թե՛ Ռ. Քոչարեանի եւ թե՛ Ս. Սարգսեանի հետ, եւ յեղակարծ՝ մէկ օրէն միւսը **դիմաշրջումով**՝ Նիկոլ Փաշինեանի հետ: Սակայն, խիստ կարեւոր տարբերութեամբ մը. Փաշինեանի մօտ ան չի կրնար շահարկել այսուհետեւ Սփիւռքի խաղաքարտը, քանի որ ամբողջ Սփիւռքահայրութիւնը ողջունեց արդէն օլիգարխիկ համակարգին դեմ կատարուած յեղափոխութիւնը:

...
Վերադառնալով Ս. Էջմիածնի **գահակալի անձին դեմ** ներկայիս ընթացող

ըմբոստություն ժողովրդային տարերային շարժումին, հարկ է պարզաբանել հետեւեալ այլաբնոյթ հարցերը.

1. Այս շարժումը ժողովրդային տարերային արդարացի պոռթկում մըն է Ս. Էջմիածնի **գահակալի անձին դէմ**, եւ ոչ թէ՛ Ս. Աթոռին: Ընդհակառակը՝ Ս. Աթոռի հեղինակութեան անեղծ պահպանումը կը պահանջէ, զայն նսեմացնող գահակալին անկէ հեռացումով, անոր գահընկէցութեամբ: Եւ՛ բնա՛լ կապ չունի օտար մութ ուժերու կարծեցեալ միջամտութեան մը հետ: Տողերուս հեղինակին **արթուն** բարեկամ Դոկտ. Գեորգ Եազըճեանի ներկայութիւնը այս շարժումին մէջ, **ի սպառ կը չքացնէ ամեն կասկած այդ ուղղութեամբ:**

2. Այս շարժումը՝ **անսպասելի չէր**, այլ՝ **շա՛տ ուշացած...**: Վերջին տասնամեակին ընթացքին, բազմապատկուած էին նոերկայ գահակալին ոչ միայն նսեմացուցիչ արարքները, այլեւ՝ մամուլին մէջ յաճախակի դարձած էին այդ արարքները քննադատող ու մերկացնող գրութիւնները, ըլլայ աշխարհական եւ ըլլայ հոգեւորական շրջանակներու կողմէ, որոնց ամենէն ականաւոր ու հետեւողական դէմքը եղաւ՝ Անթիլիասի նախկին վանականներէն Ռսկան Մխիթարեանը: Միւս կողմէ՝ երկրին իշխող օլիգարխիկ համակարգին ապագային աւազակապետութեան դէմ ըմբոստացումը կ'արտայայտուէր մամուլին մէջ եւ **մարտի կոչեր կ'արձակուէին անոր դէմ**: Իսկ ներկայ գահակալը **հլու հնազանդ գործընկերը** դարձած էր այդ համակարգին: Եւ երբ իրականացաւ Փաշինեանի յեղաշրջումը այդ համակարգին դէմ, **շատ բնականօրէն** ներկայ գահակալին դէմ ըմբոստացողները բարձրացուցին՝ **«Նոր Հայաստան, Նոր Հայրապետ»** պաստառը:

3. Արդարեւ, Ս. Աթոռի ներկայ գահակալը՝ բացի Ս. Աթոռը նսեմացնող իր անվայել վարք ու բարքէն, նոյնացած էր հին համակարգի իշխանաւորներուն հետ, եւ՛ Յակոբ Պարոնեանի բառերով, **«կոյր ու մունջ վասակ»**ի ձեռնպահ դիրքը բռնած էր, մեղսակցելով հին համակարգի օլիգարխներու գործած բոլոր ոճիրներուն, բռնարարքներուն ու թալաններուն. եւ որպէս մեր Ազգային Եկեղեցիի Հայրապետը, չէր միջամտած անոնց, կանխարգիլելու համար երկրի հայաթափումը, թալանումն ու ժողովուրդին վայրագ կեղեքումը: Ուրեմն, հիմա՝ այդ **ազգաքանդ** համակարգին հեռացումին պէտք է ընկերանար Ս. Աթոռը նսեմացնող գահակալին հեռացումը:

4. Հիմա արդէն աւելորդ է մանրամասնութիւններ յիշել այն մասին, թէ՛ այս **ժամանցուած** աթոռակալը ինչ միջոցներով, ի սկզբանէ, յաջողեցաւ նստիլ Ս. Աթոռին, ինչ դեր խաղցաւ հրեայ սիոնականի կին՝ Լուիզ Սիմոն... ո՞վ՞ որո՞ւ վճարած է քանի՞ տասնեակ հազար տոլարի կաշառքը, կամ ի՞նչ միջոցներով **միլիոնատեր** դարձաւ Ս. Աթոռը նսեմացնող այս **ժամանակավրէպ գահազաւթը...**: Ռսկան Մխիթարեան՝ հրապարակաւ, մէկ առ մէկ տուաւ անունները 12 **միլիոնատեր** բարձրաստիճան հոգեւորականներու, որոնց գլուխը կը գտնուի այս **դիմազերծուած աթոռակալը**: Անուանացանկին մէջ կան ոչ միայն Ս. Էջմիածնի Աթոռի, այլեւ՝ Անթիլիասի

Աթոռի երկու կաթողիկոսներ եւ այլ բարձրաստիճան եկեղեցականներ, ինչ որ կը փաստէ՝ որ բարենորոգումի եւ նոր կաթողիկոսի ընտրութեան լուրջ կարիքը կայ նաեւ՝ Անթիլիասի Աթոռին համար: Բարենորոգում, որուն Հայց. Եկեղեցին կարիքը ուներ հազարամեակ մը առաջ, Թոնտրակեան յեղափոխութեան օրերէն... Եւ որուն պահանջը կը դնէին հայ աւետարանականները՝ 19-րդ դարուն, եւ առաքելական բարձրաստիճան հոգեւորականներ՝ 20-րդ դարու սկիզբէն, Հայց. Առաքելական Եկեղեցին տեսնելով որպէս... «**Հոգիէ պարպուած դիակ**»: Թոնտրակեան արմատականութեան չհասնող բարենորոգումի փորձ. 16-րդ դարու յետ-վերածնութեան (post-Renaissance) Եւրոպայի մէջ՝ Մարթին Լուտերի եւ Կալվինի առաջնորդութեամբ, բարենորոգումի փորձ Կաթոլիկ Եկեղեցիին մէջ՝ 20-րդ դարու 60-ականներէն, Վատիկան Ա. եւ Վատիկան Բ. խորհրդաժողովներով, եւ՝ Pecem in Terris (եւ յ'երկիր խաղաղութիւն) եւ Aggiornameto (այժմեականացում) կոնդակներով, **հակակշռելու համար**՝ այն յեղափոխութիւնը, որ հասած էր եւ անցած՝ Թոնտրակեանի **արմատականութիւնը**, եւ որ գործին ու պայքարին արդիւնքն էր Լատին Ամերիկայի այն կաթոլիկ եկեղեցական աստուածաբաններուն, որոնք հրաժարելով Վատիկանի խաւար Միջնադարի **դպրական** (scholastic) աստուածաբանութենէն, որդեգրած էին՝ «**Ազատագրութեան Աստուածաբանութիւն**»ը (Théologie da la Libération), որուն հետեւորդներէն էր Արժանթինի մայրաքաղաք Պուլմենու Այրեսի Առաջնորդ Արքեպիսկոպոսը՝ Խօրխէ Մարիօ Պերկոլիօն, որ այժմ կը կոչուի Վատիկանի Ֆրանչիսկոս Ա. Պապը, որ կը շարունակէ ազատագրական աստուածաբանութեան բարենորոգումը Կաթոլիկ Եկեղեցւոյ մէջ...: (Ազատագրութեան աստուածաբանութիւնը դաւանող Ֆրանչիսկոս Ա. Պապը չէր կրնար կողմնակիցը չըլլալ Արեւմտահայաստանի ազատագրութեան, եւ ան մեծահեղինակ պաշտպան մըն է Հայ Հողային Դատին...):

5. Հիմա՝ ներկայ աթոռակալի **անձին դեմ** ըմբոստացող շարժումը **կուրօրէն** դատապարտողները եթէ ազատագրուած ըլլային իրենց **բնագանցական** (մեթաֆիզիք) մտածելակերպէն, եւ **զատորոշել** կարենային՝ **գահակալին անձը Ս. Աթոռէն**, պիտի գիտակցէին թէ՛ **Ս. Աթոռի պաշտպանութիւնը** շատ աւելի վսեմ ու կարելոր պարտականութիւնն է ամէն հայու համար, քան՝ **անձի** մը պաշտպանութիւնը, որուն վարք ու բարքին շուրջ կան՝ առնուազն, վերապահութիւններ եւ կասկածներ: Եւ եթէ այդ հաւկոյր պաշտպանները **լրջօրէն կը սիրէին** Ս. Աթոռը... արդէն մինչեւ հիմա **լրջօրէն հետաքրքրուած** պիտի ըլլային Ս. Աթոռի իրավիճակով, եւ **գիտակցած** պիտի ըլլային անոր բարենորոգումին անհրաժեշտութեանը, եւ՝ ըմբոստացողներուն պիտի թելադրէին **չգոհանալ լոկ գահակալին հեռացումով**... այլ պահանջել՝ Ս. Աթոռին **արմատական** բարենորոգումը, քայլ պահելով միւս եկեղեցիներու բարենորոգումի գործընթացին հետ, եւ առաջին հերթին՝ Ֆրանչիսկոս Ա. Պապի քայլերուն հետ...:

6. Այս տողերուն հեղինակը՝ ականատես եւ ականջալուր վկան եղած է, 2002 թուին, Ս. Էջմիածնի մէջ՝ Եկեղեցի-Պետութիւն յարաբերութիւններ նիւթին շուրջ կայացած իրաւաբաններու միջազգային գիտաժողովի ընթացքին, ներկայ գահակալին անվայել

ընթացքին եւ արտառոց ելոյթին...: Գիտաժողովին կը մասնակցէին ոչ միայն Սփիւռքէն եւ Հայաստանէն աշխարհական իրաւաբաններ, այլեւ՝ Լուտերական, Անկլիքան եւ Կաթոլիկ եկեղեցիներուն գործուղած հոգեւորական իրաւագետները, որոնք խորին ակնածանքով կը մօտենային Ս. Էջմիածնի Մայր Աթոռին, որպէս՝ Քրիստոնէութիւնը պետականօրէն ճանչցող պատմութեան առաջին ժողովուրդին Վատիկանը...: Սակայն, Քոփէնհակէնէն լուտերական Վերապատուելի Մայքըլ Ուետթը, Փարիզէն կաթոլիկ Հայր Լիւք Փերրէնը եւ Լոնտոնէն անկլիքան Արքեպիսկոպոս Ուիլիըմ Կորտընը նոյն ակնածանքը չկրցան ունենալ Մայր Աթոռի գահակալին հանդէպ, գիտաժողովի աւարտին, երբ տեղի ունեցաւ հրաժեշտի հանդիպում մը մասնակիցներուն եւ գահակալին միջեւ Ս. Աթոռի Վեհարանին մէջ, ուր որոշեալ ժամուն ներկայ էինք բոլորս, անհամբերացած՝ լսելու Հայց. Եկեղեցւոյ Վեհափառ Հայրապետին ողջերթի խօսքը: Բայց գահակալը չէր գար: Գիտաժողովի վարիչը՝ այժմ վախճանեալ Շահէ Արք. Աճեմեան, շարունակ կ'երթեւեկէր՝ ներկաներուն եւ Վեհարանի խորքի մեծ դրան միջեւ, եւ գահակալը կ'ուշանար: Մօտ 25 վայրկեան ետք, խորքի դուռը բացուեցաւ եւ գահակալը դուրս եկաւ եւ հանդիսաւոր ու յամրաքայլ յառաջացաւ դէպի ներկաները, Շահէ Արք.ի առաջնորդութեամբ, որ իր հակիրճ բացման խօսքին մէջ յայտնեց նաեւ, թէ՛ ինք գահակալին խօսքը՝ հիւրերուն համար, պիտի թարգմանէր անգլերէնի եւ հրաւիրեց գահակալը: Ասկա իր **տարտամ, կցկտուր եւ շտապողական** ուղերձին մէջ գործածեց **անվայել եւ արտառոց** բառապաշար, զորս, բարեբախտաբար, Շահէ Արք. **կը յղէր, կը տաշէր, առաւել իմաստալից ու հայրապետավայել կը դարձնէր**՝ թարգմանութեան ընթացքին: Օրինակի համար՝ վերջին բառերը. «Ես կարճ եմ կապում իմ խօսքը, որպէսզի դուք շտապ գնաք ձեր հեշտանքին...»: Շահէ Արք. այս բառերը անգլերէնի մէջ վերածեց մօտաւորապէս հետեւեալին. «Ես չեմ ուզեր ձեզ երկար գրաւուած պահել, որպէսզի դուք շուտով կարենաք վերադառնալ ձեր առաքելութեան»: Ներկաները ջերմօրէն ծափահարեցին: Բայց ծափահարութեան պատշաճութեան փոքր մասը կ'երթար Շահէ Արք.ի սրբագրած ու շպարած խօսքին, իսկ ակնածանքի մեծ բաժինը կ'երթար Հայց. Եկեղեցւոյ Հայրապետութեան խորհրդանիշ՝ Ս. Էջմիածնին...:

7. Օրինակելի տիպար բարենորոգիչ Ֆրանչիսկոս Ա. Պապը յարատեւօրէն իր եկեղեցիին հոգեւորականներուն կը յիշեցնէ իերնց հովուական պարտականութիւնները, որոնք կրնան եւ նոյնութեամբ պահանջուիլ նաեւ Հայց. Եկեղեցւոյ հոգեւոր հայրերէն: Այդ պարտականութիւններէն փոքր փունջ մը հաւաքեցինք “OSSERVATORE ROMANO” պաշտօնաթերթի 2018 թուի թիւ 8 համարի շաբաթական անգլերէն եւ ֆրանսերէն յաւելուածներէն, զանոնք յայտնելու համար՝ ոչ միայն հայ հոգեւորականներու, այլեւ՝ հայ աշխարհական հաւատացեալներու լուրջ ուշադրութեան, որպէսզի կարենան դատել եւ հասկացողութեամբ մօտենալ **ներկայ աթոռակալին դեմ ըմբոստացող ճշմարիտ, բժախնդիր ու մարտնչող Էջմիածնասերներուն**, որոնք այնքա՛ն ջերմօրէն կը սիրեն Ս. Էջմիածնը եւ այնքա՛ն խստապահանջօրէն նախանձախնդիր են Ս. Էջմիածնի վարկին ու հեղինակութեան բարձր պահպանումին, որ զիրենք քննադատողներուն պէս չեն

գոհանար շրթնային քննադատութիւններով, այլ՝ իրենց գործն ու հանգիստը թողած կը մարտնչին զանգուածներ զօրաշարժելով...:



Հոգեւորականին պարտականութիւններէն են նաեւ հետեւեալները.

Ա) Ճշմարիտ հոգեւորականէն՝ ժողովուրդին հանդէպ լրացնել կը պահանջուին նոյն այն պարտականութիւնները, որոնք կը պահանջուին ճշմարիտ հասարակական գործիչէն:

Բ) Հոգեւորականը պարտի կանգնիլ կեղեքուող, բռնադատուող ու տառապեալ ժողովուրդի կողքին, անոր արդար պահանջները պաշտպանելով, եւ՝ անոր գործնապէս օգնութեան հասնելով:

Գ) Հոգեւորականը իր առաքինի վարք ու բարքի անձնական օրինակով կը պահպանէ եկեղեցւոյ սրբութիւնն ու Աստուծոյ փառքը, կամ ճիշդ հակառակը. կը նսեմացնէ զանոնք, եթէ վարէ հոգեւորականին անվայել եւ անյարիր արծաթասերի, փառասերի, հեշտասերի ու շուայտասերի կեանք մը:

Դ) Հոգեւորականը պարտի ըլլալ՝ խոնարհասիրտ, հեզահամբոյր, երախտագէտ, զինք երկէ առաջնորդած երեց եղբօր հանդէպ, եւ յարգել անոր արդարացուցած հեղինակութիւնը եւ չուրանալ անոր վաստակը: Ֆրանչիսկոս Ա., երբ վերջերս այցելած է Չիլի եւ Փերու, հանդիպած է իր անցեալի երկու ուսուցիչներուն՝ Խօսէ եւ Գարլոս Ալտոնաթէներուն (José, Carlos Aldunate, յաջորդաբար՝ 100 եւ 101 տարեկան), եւ զիրենք ողջունած է հաւատացեալներու բազմութեան մը առջեւ եւ խոստովանած. «Անոնք եղած են իմ երկու հոգեւոր առաջնորդներս, եւ եղած են միշտ ողջախոհութեան թագաւորներ: Ես յատուկ շնորհակալութիւն կը յայտնեմ երեց եղբօս՝ Հայր Գարլոսին, որ 1960 թուին, 58 տարիներ առաջ, ինծի տուած էր եղբայրական յորդոր մը: Այդ ժամանակ ես վարիչն էի կրտսեր արեղաներու դպրոցին (Juniorat) եւ անոնցմէ մէկը շատ զայրացուցած էր զիս իր վարքով, եւ ես արտօնութիւն խնդրեցի Հայր Գարլոսէն՝ վտարելու այդ արեղան: Հայր Գարլոս նախ խնդրեց որ հանդարտիմ եւ չշտապեմ, այլ՝ այդ արեղային հետ վերաբերմունքս առաւել եղբայրական դարձնեմ: Ես կատարեցի Հայր Գարլոսի յորդորը, եւ հետագային, արդիւնքը եղաւ դրական»: Ս. Աթոռի ներկայ գահակալը ոչ թէ կրտսեր արեղաներ, այլ՝ բարձրաստիճան վարդապետներ կարգաւոյժ կ'ընէ մեծ թիւով, եւ՝ մեծ շտապողականութեամբ, եւ՝ **ոչ-եղբայրական վերաբերմունքով...**: Ան ձեռնպահ մնաց եւ **հայրապետական դիրքն ու հեղինակութիւնը չարժեցուց**, երբ տեղի ունեցան Հոկտեմբեր 27-ի **պետասպան** եւ Մարտ 1-ի **ժողովրդասպան** նախճիրները..., երբ երկրի **վերգետնեայ** եւ **ստորգետնեայ** հարստութիւնները մոնկոլ-թաթարական թափով կը թալանուէին հայանուն օլիգարխներու կողմէ, եւ երբ հարիւր հազարներով երկրի քաղաքացիները գաղթականի ցուպը ձեռին կը **հայաթափէին մեր միևնուճար հայրենիքը...**: Անոր այս բոլոր կամաւոր պաշտօնազանցութիւնները արժանի չէ՞ն գէթ մէկ **ակամայ** պաշտօնանկութեան...:

Ե) Ֆրանչիսկոս Ա. Նաեւ՝ հոգեւորական իշխանութիւն ունեցողներուն պարտականութիւնը կը նկատէ՝ սորվիլ եւ գիտնալ, իշխանութեան հրաժեշտ տալու ժամը՝ տարիքի, առողջութեան, եւ՝ անվայել վարքի եւ բարքի հետեւանքով... (Learn to take your leave)

2) Պապը Նաեւ կ'ըսէ. «Եկեղեցին՝ որպէսզի չծերանայ, պետք չէ վախնայ Նախաձեռնելու՝ վտանգաւոր կարծուած բարենորոգումներու եւ փոփոխութիւններու...» (Pour ne pas se vieillir, l'Eglise ne doit pas avoir peur de prendre des risques") Յարատեւ հոսող ջուրը ոչ կը ճահճանայ եւ ոչ ալ կ'ապականի...: Հերթական ինքնանորոգումի ուղիին հետեւող Ս. Էջմիածնի Ս. Աթոռը չի ծերանար, այլ՝ կ'ինքնամաքրուի: Այսօր՝ Նոր Արեւելահայաստանը, կամ Դ. Հանրապետութիւնը, կարիքը ունի Նոր Ս. Էջմիածնի...:

8. Ներկայ աթոռակալը **բարեմտօրէն** եւ **ազնիւ բայց կուրացած հոգիով** պաշտպանողները, կամ **անտեղեակ** են անոր վարք ու բարքին, եւ կամ ալ՝ **զոհերն են բնագանցական մտածելակերպին**: Ճիշդ նմանը անոնց, որոնք 2002 թուին, Ս. Էջմիածնի Վեհարանին մէջ, ջերմօրէն ծափահարեցին ներկայ աթոռակալի ելոյթի վերջաւորութեան, ոչ թէ անոր անվայել եւ արտառոց խօսքերուն համար, այլ՝ ակնածելով անոր գրաւած Ս. Աթոռին, որ դարձած է սրբութեան խորհրդանիշ մը եւ **պատմական ֆերթիշ** մը, ոչ միայն հայ հաւատացեալներուն մօտ, այլեւ՝ օտարազգի հիւրերու եւ հաւատացեալներու մօտ, որոնք սակայն, ծանօթ չեն գահակալի անձին եւ անոր վարք ու բարքին, եւ անոնք հարցուցած ալ չեն **անձին** մասին, որովհետեւ՝ իրենց **բնագանցական** մտածելակերպով, **անձը** չեն **գանազանած** Ս. Աթոռէն, եւ՝ ipsa facto **տուեալ ընդունած են** թէ՛ ան **արժանի** էր այդ Աթոռին, **որ ընտրուած էր**: Գահակալը, որ արժանի չէր Ս. Աթոռին, կամ երբ անարժան դարձաւ իր վարք ու բարքին բերումով, **կը Նստմացնէ** Ս. Աթոռը, հետեւաբար՝ **գիտակից, տրամախոհ** (ոչ բնագանցական) ու **ճշմարիտ** Էջմիածնասերը՝ պետք է պահանջէ Ս. Էջմիածնինը Նստմացնող գահակալին **գահընկեցումը**, հեռացումը՝ Ս. Էջմիածնէն, եւ ոչ թէ՛ զայդ պահանջող ըմբոստները դատապարտէ եւ զրպարտէ:

Ճշմարիտ Էջմիածնասերը՝ իր **տրամախոհական** (դիալեկտիկական) մտածելակերպով, Նախ՝ **կը գանազանէ** գահակալին **անձը** Ս. Աթոռէն: Այսինքն կ'ուզէ մանրակրկիտ գիտնալ, թէ՛ գահակալը ինչպէ՞ս հասաւ Ս. Աթոռին, ի՞նչպիսի յարաբերութիւններ կը վարէ իր հոգեւորական եղբայրներուն հետ, կ'արժեցնէ՞ իր հայրապետի դիրքը՝ պաշտպանելու համար իր ժողովուրդին իրաւունքները, պետական իշխանութեանց օրինագանցութիւններէն, եւ կը ջանա՞յ բարեկարգել ու բարենորոգել Ս. Էջմիածնինը:

Մինչդեռ անգիտակից «Էջմիածնասեր»ը՝ իր **բնագանցական** մտածելակերպին բերումով, **գանազանութիւն** չի դնէր գահակալի **անձին** եւ Ս. Աթոռին միջեւ, եւ այս **Աթոռին** հանդէպ իր ունեցած անկեղծ սերն ու ակնածանքը **կուրաբար** կը շնորհէ Նաեւ գահակալի անձին. կը պաշտպանէ զայն որ մնայ Ս. Աթոռին վրայ եւ **շարունակէ Նստմացնել զայն**...: Այսինքն՝ անգիտակցաբար եւ ակամայ մեղսակիցը կ'ըլլայ այսպիսի

գահակալի մը, որ **բարոյապետ կը սպաննէ Ս. Աթոռին սրբութիւնը**: Այս **անկեղծ բայց կուրացած «Էջմիածնասեր»**ը կը նմանի հոգեմտաւորապէս հիւանդ այն սիրականին, որ իր սաստիկ սիրոյն պատճառով կը սպաննէ իր սիրուիին: Այս նիւթին շուրջ կան վեպեր եւ սինեմայի ժապաւեններ:

Հանճարեղ Չափլին իր "A King In New York" ֆիլմին մէջ դրած է ֆիլմի ամերիկեան ոճի ծանուցում մը, որ հետեւեալն է.

Սիրահարեալ cowboy-ը՝ ատրճանակը ձեռքին, կ'ըսէ իր սիրուիին. "Honey! I'm gona kill ya for your own sake!", եւ կ'արձակէ փամփուլտը, որ կը վրիպի, քանի որ սիրուիին շարժած էր: Ծանուցողին ձայնը կ'ըսէ. "He missed it! Don't miss the film!" Հակուրացած «Էջմիածնասեր»ներու փամփուլտը՝ անարժանը պաշտպանող, որ կ'երկարածգէ Ս. Աթոռին նսեմացումը, պէտք է վրիպեցնել՝ փրկելու համար Ս. Աթոռը, գահընկէց ընելով անարժան աթոռակալը:

Հարկաւ, իբր իրաւաբան, պարտիմ յիշեցնել թէ՛ այս բարեմիտ, անտեղեակ, հակուրացած, ուրեմն **անգիտակից** «Էջմիածնասերներ»ուն մեղսակցութիւնը անարժան աթոռակալին հետ, զիրենք քրեական պատասխանատուութեան ենթակայ չի դարձներ, քանի որ իրենց պաշտպանութիւնը անարժանին՝ **անգիտակից է...** դիտաւորեալ չէ, սուտ վկայութիւն չէ:

Սակայն, նոյն ատեն, քրեական պատասխանատուութիւն կը կրեն այն բոլոր բարձրաստիճան եկեղեցականները, որոնք քաջածանօթ են այս աթոռակալի բարք ու վարքին, որոնցմէ տարբեր չեն իրենց վարքն ու բարքը, կամ նիւթապէս եւ դիրքի տեսակետով **օգտուած են** անկէ, եւ կամ ալ՝ մորթապաշտ են եւ կը վախնան կարգալոյծ ըլլալէ, եւ այս պատճառներով եւ շարժառիթներով պաշտպանեցին ու կը շարունակեն պաշտպանել զինք:

